



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 30 ՅՈՒՆԻՄԱՐ, 2012

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 62

ԱՍՏՈՒԱԾ Է ՓՐԿԻԶԸ ԵՒ ԱՊԱԻԷՆԸ

Միայն Աստուծով հոգիս հանգիստ կը գտնե. անկէ՛ կու գայ փրկութիւնս:

Միայն ա՛ն է ապաստանս եւ փրկութիւնս,

ա՛ն է իմ ապաւենս, բնաւ պիտի չսասանիմ:

Աստուծմէ կախում ունիմ փրկութիւնս եւ փառքս.

ա՛ն է ամուր միջնաբերդս. ես Աստուծոյ կ'ապաւինիմ:

Անո՛ր վստահեցէ՛ միշտ, ո՛վ ժողովուրդ,

անո՛ր դիմաց պարպեցէ՛ ձեր սիրտը. Աստուած է մեր ապաւենը:

Բոլոր մարդիկ շունչ մըն են պարգապէս.

ռամիկ թէ ազնուական՝ խաբկանք են, ուրիշ ոչի՛նչ.

կշիռֆի մէջ որ դրուին՝ միասնաբար ոչինչէն ալ նուազ են:

Հարստահարութեան մի՛ ապաւինիմ, յափշտակուած բաներով մի՛ հպարտանաք.

նոյնիսկ եթէ ձեր հարստութիւնը բազմապատիկ ըլլայ, ձեր սիրտը անոր չըլլայ՝ որ կապէ՛:

Աստուած ինք յայտարարեց, եւ քանիցս ես լսեցի՝ թէ գորութիւնը Աստուծոյ կը պատկանի:

Այո՛, ո՛վ Տէր, ողորմութի՛ւնն ալ քուկդ է,

որովհետեւ իւրաքանչիւրին կը հատուցանես իր գործերուն համաձայն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսու Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Կ'աղաչենք, Տէր, իմաստութեանդ լոյսը ծագէ

եւ վերանորոգող հզօր Հոգիիդ շնորհքները թափէ

մեր խաւարած հոգիին մէջ, եւ մեր սրբին մէջ դրոշմէ

աստուածային երկիւղդ եւ ջերմեռանդութիւնդ,

որպէսզի արժանի կերպով կարդանք Աստուածաշունչ Զու Մարեանդ,

բարեպաշտ հաւաքքով ու յարգանքով:

Եւ մեզ արժանի ըրէ՛ դառնալու ճշմարիտ աշակերպներդ,

եւ հասնելու յաւիտենական կեանքի ժառանգութեան: Ամէն:

ՕՐՈՒՎԱՆ ՆԻԻԹ
ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
Գլխ. 16:24-28

ՅԻՍՈՒՄԻ ՀԵՏԵԲԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (16:24-28)

- Յիսուսը Քրիստոս դաւանիլ կը նշանակէ.
 - Ընդուիլ գիճք որպէս Փրկիչ, Տէր: Բաւարար չէ միայն լեզուով ընդունիլ ու դաւանիլ, այլ փակաւիճ կ'ենթադրէ.
 - Ուրանալ մեր անձերը: Պօղոս Առաքեալի բացատրութեամբ. «Ես չէ որ կ'ապրիմ, այլ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս»:
 - Պարկանիլ Իրեն: Ես Քրիստոսի է որ կը պարկանիմ: Ան գիս Իր արիւնովը գնեց (Ա Կորնթացիս 6:20): Անոր կամքին համաձայն ապրիլ:
 - Առնել Խաչը եւ երելէն երթալ: Քրիստոսի հետեւեցողը ընթանալու: Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ խաչի ճանապարհ, սակայն, ոչ իբրեւ փառապանք, այլ դէպի յաղթութիւն փանող:
 - Ամբողջական յանձնառութիւն: Կեանքի ու մահուան գնով:
- Ինչո՞ր Քրիստոսի հետեւիլ:
 - Որովհետեւ Ինքն է միակ Փրկիչը:
 - «Ով որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն»:
 - «Ով որ Ինձի համար կորսնցնէ իր կեանքը պիտի գտնէ զայն»:
 - Ինչ ալ ըլլան մեր հանգամանքները, դիրքը, ունեցուածքը մենք չենք կրնար մենք գնեց փրկել:
 - Որովհետեւ Ինքն է Դարաւորը:
 - Քրիստոսի կը պականի ամէն իշխանութիւն դարեւու իւրաքանչիւրը ըստ իր գործերուն:
 - Հաւաքքի արփայայտութիւնը եղող գործերը կարելոր են, այլ խօսքով՝ հաշուերութիւն: «Տո՛ր զհաշի փնտրութեան քո» (Ղուկաս 16:2):
- Հոս գրնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ փեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ:
 - Խօսքը կարելի է այնպէս հասկնալ որ կը վերաբերի այլակերպութեան դրուագին, երբ Թափօր լերան վրայ Քրիստոս կ'այլակերպուի եւ Անոր փառքը ցոյց կը փրուի միայն երեք աշակերպներուն:
 - Անոր յարութեան ակնարկութիւնը:

